

ՄԵՌԵԼՈՅԻ ՅԱԶԱԽԱՆԵՔ

ՈՐԲԵՐԸ

...Ու դարձեալ հոգիիս փառալիններէն կ'անցնին ,
 Մահապարտներու պաղատող նաշուածներով ,
 Ապաշխարանքի կերոններ ձեռուորնին ,
 Ու պաշտամունքի բուրմունքներ դանդաղորէն ինկարկէրով :
 Օ'հ, իրենց կարսաւ'նը ծծողն . մխտիք ուխտաւորի ,
 Որ ա' յնչափ երկիւղած ու մահազոյժ ու խոհուն ,
 Դեպ ի նուիրուիլ աստուածային ծառին անհունօրէն կ'երկարի :
 Այս գիշեր, հսկումէն յետոյ . Մեռելոցի իրիկուն ,
 Օ' , Անոնք հոն բոլորն ալ իրենց Մահերը պիտի ճանչնան ,
 Հոգիիս անդնդային մեռելաստանին վրայ ,
 Անասմանօրէն իրարու հետ , ճակաս ճակասի...
 Ու ադէն , խեղալեղօրէն բոլորը մեկ ,
 Գերեզմաններուն վրայ ծունկի եկած՝
 Մեռելներու յաճախանքին իրենց հոգիները ահաբեկ ,
 Ու գլուխին ձեռուորնուն մէջ ու աշուղնին փակած...
 Իրենց ցաւին տարփաւարի արիւնը կուշան... :

Օ' , չըլլայ որ երբեք այս գիշեր իմին վրաս մտածեք... :

Ասում' ծ , մտկորեք սա ընդհարումները մարմիններու ,
 Ու բոլոր որբերը որ ա' չ կը փաթթունին
 Փոքորկոտօրէն գերեզմաններէն քարճրացող ամեհի կմախքներուն...
 Ու այն բոլորին ճիւղերը որ իրար կը ճանչնան...
 Ու անոնցը որ խնկրօրէն իրար կը փնտնեն...
 Ու դեռ իրարու ետեւէ
 Բացուող հոգերուն մարկուիլը ասանց հետ ,
 Ու անոնց աղերսը որ դեռ իրար կ'ուզեն...
 Ու երդումները անոնց որ ա' չ իրար պիտի պաշտեն աշտուհ...
 Ու անոնք որ իրար երեւք չճանչցան...
 Ու դեռ անոնք որ մեկնակու մեք ինքզինքնին պիտի զտնեն...
 Ու անոնք որ վերջապէս այս գիշեր, այնչափ չարաշուփօրէն իրարու քաղկեկաւ ,
 Ու փախո'ւտը ասանց, այս անեւուն, այս բոլորին ,
 Իրարու մեղէ, մահազուծօրէն վայրագ ու խաչափան ,
 Դեպ ի ո'ր հեռաւոր հորիզոններէն ին հոգիին
 Ու դեպ ի ո'ր Աստուծոյ քերեւս աւելի ոճրական ,
 Օ'հ , ա' չ վերջապէս , եղբայրաբար ըսեք ,
 Նեղագարօրէն, իրարու մեղէ , բոլորը մեկ պիտի երթան... :

ԱՏՈՄ ԵԱՐՃԱՆԵԱՆ